

Մով
673

Զ Ա Ն Ա Յ Ո

ԳԻՐԲ ԶԱՆԱՊՄՈՐԿԻ

(ՀԱՏՁՆՏԻՐ)

ՆՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

Գ Ե Ր Ո Ղ Ն Ե Ր Ը

ՄԱՏԵԼԱՇԱՐՆ
ԳՐԻԳՈՐ Գ. ՄԱՐԵԱՆԻ
ԱՆՆՈՒՄ - ՀԱՆՆՈՒ - ՊԵՐՈՒԹ
ԴԱՍ Ը ԹԻՆ 68

Ո՛ր, Ռիմպոսի՛, այս աշխարհում երբ
Զեն լինի ոգու տեղը ու հոսքը—
Կը հնձէ կեկի՛ն բազմաթեղուն բեմ,
Եւ կեկի՛ն, կեկի՛ն ուղիներում մեր,
Չրգի դիցուի՛ն մեզ կ'առաջնորդէ։—

1946

ԱՅՍԻՆԱՅ ԳՐԱԳՐԱՐԱՆ
ԹՈՒՆԿԱՆԵՆՏԱԼ ԳՐԱԳՐԱՐԱՆ
ՄԱՍԿՈՎԱ

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Ինքնպատասխան և հաստատ համոզումով ձևոնարկեցինք մեր մատենաչարի հրատարակութեան, որուն Ա. պրակը նուիրեցինք մեծանուն և սիրուած բանաստեղծ Աւետիք Իսահակեանի: Գրասէր հասարակութեան մատուցուած զնատընտիրան կարճ ժամանակի մէջ սպառուած լուազոյն գրաւականն է Սովետահայ գրականութեան նկատմամբ մեր ժողովուրդի ունեցած խոր գնահատումին: Անոր ծարաւը ունէր հայրենակարօտ գաղթականայր իր մայր հայրենիքին խորհրդայնացման առաջին օրէն: Սովետահայ մեր բոլոր բանաստեղծներուն գրական ստեղծագործութեանց մէջ ակնյայտնի կերպով կը նշմարուին իսկական բանաստեղծի հարազատ գրոյձ, կենդանի ոճ և ճաշակի քաղցրութիւն:

Ներկայ պատմական նշանակելի օրերուն, արտասահմանի մէջ գտնուեցան մարդիկ որոնք իրաւ բանաստեղծութեան պիտակին տակ ջանացին հարուածել, անգունել ու արհամարհել Սովետական Հայաստանի 25 ամեայ գրական հարուստ ստեղծագործութիւնն ու անոր արժանաւոր մշակները: Այդ մտածումներով տոգորուած մարդիկ՝ ինքնամոլութեամբ միայն իրենց շեռնի փղոսկրէ աշտարակին մէջ և շարուեստը արուեստին համար՝ նշանաբանը գրոյձած իրենց ճակտին՝ շրջեցան ժողովուրդի այլազան խաւերու մէջ ազմկելով հրապարակը: Անոնք թափառեցան նաև գրական բոլոր պարբերականներու և հանդէսներու էջերուն վրայ հաստատելու համար իրենց տեսակէտին ճումարիս, իրաւ և գեղեցիկ ըլլալը: Այդ խառնուածքով մարդիկ արհամարհեցին ընչազօրեկ մարդկութիւնը, և՛ անհաղօրդ մնացին անոր տառապանքի խորութեան, բազկերակի զարկին, յոյզերուն ու տենչերուն:

Արհամարհանք միայն ունինք ամէն անոնց հանդէպ որոնք գրական քննադատի յաւակնութեամբ կ'աշխատին արժէքազրկել Սովետական Հայաստանի գրականութիւնը որ ժողովուրդին ստեղծագործութիւնն է և կը պատկերէ գարեբէ ի վեր շահագործող տարբերու զձեռն հոգեբանութեան ենթակայ և զրկանքի ու տառապանքի զարհուրելի բովէն անցած ժողովուրդին իրական կեանքը, ապուումներն ու ազատութեան ձգտումները: ձյմարիտ և իրաւ քննադատութիւնը գրական երկի մը սփեղ և գեղեցիկ կողմերը հաւասարապէս յայտնաբերող ու արժէքները գնահատող արուեստ մը պէտք է ըլլայ:


Ամերիկացի քաջածանօթ հեղինակ՝ Ուոլթըր Քոլթըն հանճարի յայտարար կը նկատէ քննադատը: Իսկ իրաւունք ունէր լօճկֆէյօ երբ կը գրէր անտարակոյս բարեմիտ էր քննադատութիւնը իր սկզբնական շրջանին, երբ երկի մը թերութիւններէն աւելի գեղեցիկութիւնները ի յայտ կը բերէր: Մարդոց կիրքն էր որ շարասիրտ դարձուց զայն:»

ՀՐԱՏԱՐԱԿԱԶԱՆԱՆ ՄԱՐՄԻՆ



ՆՂԻՉԷ ԶԱՐԵՆՑ

Եղիշէ Զարենցը ծնուել է Կարսում, 1897 թուին, սովորել է այնտեղի ուսուցիչական դպրոցում: Տակաւին դեռ պատանի մասնակցել է կամաւորական շարժումին: Առաջին անգամ տապաքուել է 1912 թուին: Զարենցի ստեղծագործութեան մինչ-հոկտեմբերեան շրջանը բնորոշուում է Տէրեանականութեամբ ու մասամբ ազգային մեթիֆներով, որոնց դէմ, սակայն, նա սկսում է ծառանալ արդէն «Տանթուական առասպել» պոեմում (1915—16 թ.): Հոկտեմբերը խոշոր բեկում առաջ բերեց Զարենցի մէջ: Զարենցը մասնակցեց Եեղափոխութեան ու իր ուստիօ պոեմներում (1918—1920 թ.) աննախընթաց



• ուրեւեւ...

Թափով երգեց այն, յաղթահարելով իր անցեալն ու մասնատրապէս Տէրեանին թէ՛ ըստ բովանդակութեան եւ թէ՛ ըստ ձեւի: 1920—23 թ. նա գրեց իր յայտնի «Երկիր Նայիրի», որտեղ կծու հեգնեց ու խիստ քննադատութեան ենթարկեց հակաեղիպփոխական Դաշնակցութեան ղեակցիոն—ազգայնական քաղաքականութիւնը: Հետագայում՝ իրար ետեւից լոյս տեսան նրա քազմաթիւ պոեմներն ու քանաստեղծութիւնները, որոնք ծանօթ են իւրաքանչիւր ընթերցողի: Չարենց իր «Եպիքական Լուսարաց» գործում (1930 թ.) շարունակելով երգել Հոկտեմբերը, նորից հարուածում է Դաշնակցութիւնը, ու փորձում—յաղթահարելով իր ստեղծագործութեան մանր-բուրժուական տարրերը—ընդհուպ մծտննալ սոցիալիստական շինարարութեան ու նրա առօրեային: Չարենցը հայ պրոլետ-պոեզիայի ամենախոշոր դէմքերից մէկն է:

Չարենցի «Երկիր Նայիրի» վէպը թարգմանուած է ռուսերէն եւ վրացերէն, իսկ մ'ի շարք քանաստեղծութիւնները եւ պոեմները թարգմանուած են ռուսերէն, ուկրայներէն, վրացերէն, թուրքերէն, քրդերէն եւ այլ լեզուներով: 1932-ին Պետհրատը մ'ի մեծադիր եւ շքեղ հատորով լոյս է ընծայել Չարենցի «Երկերը», որի մէջ հեղինակը գետեղել է իր չափածոյ եւ արձակ լաւագոյն գրուածքները: Չարենցի վերջին գործն է «Գիրք Ճանապարհին» (1933 թ.):

ՆՈՎԱՏԵՐԵՐ-ՆՈՑԵՄԵՐ ԶԱՐԵԳԻՐԸ

ԾԱՆՕԹ.— Էջմիածնի եկեղեցական համագումարի պազամաւորներու վկայութեան համաձայն Չարենց մեռած է բնական մահով 1942-ին:



ԱԿՐՈՍՏԻՔՈՍ

Արեգա՛կ, ովկիան զօրութեան,
Ինչպէ առ ռուպէ քա հրով
Փայփայի՛ր, տուր զօրութիւն
Էակից այս երգի ու սիրոյ,
Նա դեռ փո՛քր է այնքան ու բոյլ,
Իր սիրքը—դեռ ստափուր է մահուր,—
Կազգուրուի բող նա քա հրով:

Չլինի՛ բող որ աւխարհում,
Արեգա՛կ, որ ես չերգեմ
Բախնական, ռամիկ այս դարում,
Էութեամբ քա յցուած, հրկեզ,
Նուիրուած պայփաբին այս ու քեզ
Յարդ չեղած սաղեր ու երգեր:—

ՄԵՐ ԼԵԶՈՒՆ

Մեր լեզուն նկուն է ու բարբարոս,
Առնական է, կուպիս, բայց միևնույն պահին
Պայծառ է նա, որպես մշտաբորբոք վարոս,
Վառուած հրով անեւջ դարերում հին:—

Եւ վարպետներ, խոնարհ ու հանճարեղ,
Յղկել են այն դարեր, որպես մարմար,
Եւ փայլել է նա մերթ, ինչպես բիւրեղ,
Մերթ կուսացել, ինչպես լեռնային քար:

Բայց միշտ պահել է նա իր կենդանի ոգին,—
Եւ երբ մենք այսօր կոտորուած ենք այն մեր—
Այդ նրանից է, որ ուզում ենք մեր
Նոր խոհերի վրայ ժանգ չչոփի:—

Այդ նրանից է, որ մեր այսօրուայ ոգուն
Այլեւս չի կարող լինել պատեան
Ո՛չ Տերեանի բարբառը նուազուն,
Ո՛չ Նարեկի մրմունջը մազալաթեայ:—

Եւ ո՛չ անգամ Լոռու պայծառ երգիչ
Քումանեանի բարբառը գեղջկական,—
Բայց նա կը գայ—լեզուն այս երկաթեայ բեմի
Եւ խոհերի այս խո՛ր ու երկրակամ...

ԳԱԼԻՔԻ ՈՐՄԱԿԻՐՆԵՐԸ

ՀԱՐՈՒԱԾԱՅԻՆՆԵՐԻՆ

ՆՈԱՆՔ ԳԱԼՍՈ ԵՆ ԳԻՒՂԵՐՈՑ ՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՑ...

Նրանք գալիս են գիւղերից ու ֆաղաֆներից,

Գալիս են հանգներից,

Գործարաններից,

Գալիս են երկրի հեռաւոր ծայրերից,

Գալիս են բոյոր վայրերից.—

Ղեկավարի կանչին, սերունդների կոչին

Գալիս են նրանք հազարներով,

Աւելասանֆի այս մեծ զօրակոչին

Գալիս են երկաթեայ

Շարքերով:

Անտառների նման հոծ ու խիտ,

Ովկիանի յախուռն ակիֆների նման,

Գրոհելով մի նոր, մի կամաւոր ուղի,

Որ պայքարի բոցում ամրանում է հիմա,—

Ընդդէմ ֆամա՛ւն, հողմի՛ն, ընդդէմ հազա՛ր սարի

Այս արիերին խփող մահընթացութեան—

Ահա ելած մարտի մի վիթխարի՝

Ընթանում են յանդուզն մի վեհութեամբ:

Այնտեղ, այս ուժերի

Ջրաբաշխման կէտում,

Ահունճներում այս բարձր ոգեւորութեան,

Ուր վերջանում է մեուրը սարիների,

Որպէս մռայլ մի ամպ,—

Այնտե՛ղ, այնտե՛ղ, այնտե՛ղ,

Ուր կուտակած եռանդը կասառող

Նւ մի բռունցք շինած գալիֆների կարօք՝

Անտեղօրէն մղւում է դէպի զրահ

Այս մարդկային օրօք,—

Այնտե՛ղ, այնտե՛ղ, այնտե՛ղ,

Ուր կոփելու համար ապագայի ընթացքը

Կարծրանում է կամքը, որպէս զբանիս,—

Այնտեղ, գալի՛ք կեանքի
 Այգաբացով յլի՛
 Լեռնացիլ է ինքը—
 Ղեկավարը:—
 Ելած համայն կեանքի
 Արկածառոտ բովից,
 Պայքարներից ելած հազարամեայ,—
 Ելած անդուլ եփուող
 Սոցիալական ծովից,
 Որ, ալեկոծ կրկին,
 Մոնչում է հիմա,—
 Իր պողպատեայ անթիվ մկաններով,
 Իր ուղեղով, որ պիրկ է որպես մկան,—
 Տխտանային հայեացքն յառած հեռուն,
 Դեպի անդասակարգ ապագան,—
 Դասակարգի բոլոր հերոսական
 Հանճարների ուղեղը եւ կամքը ամբարած—
 Եւ վարում է այս մարտը,
 Եւ մղում է
 Մեր բանակները մեծ դեպի վսեմ մի կեանք:—

Ո՞ր, դո՛ւ երկաթեայ դեկավա՛ր,
 Որ վարում ես այս մարտը, որպես թիսան,—
 Կա՞յ,
 Գոյուրիւն ունի՞ քո ընթացքի համար
 Անյաղթելի մի բան...
 Ո, ո՞ր, ո ո՞ր առաջնորդը,
 Ո՞ր դեկավարն արդեօք, որ մկել է մարտը—
 Եղել է կա՛րժը այսօր
 Եւ այսօր յառ,
 Եւ իր մարտով այսօր՝ ուղիներ է հարթել...

Նրանք գալիս են գիւղերից ու քաղաքներից,
 Գալիս են հանգրից,

Գործարաններից,
 Գալիս են երկրի հեռուոր ծայրերից,
 Գալիս են բոլոր վայրերից:
 Գալիքների կանչին, Ղեկավարի կոչին
 Գալիս են նրան միլիոններով,—
 Աշխատանքի այս մեծ զօրակոչին,—
 Եւ մյուս է նրանց, ղեկավա՛ր,
 Քո երկաթեայ կամբը—
 Ինչպի գո՛հ:

Անծայրածիր երկրի սեսպներից անծայր,
 Ու լեռներից, ու բարձր ֆալաֆներից,
 Ուղիներից, ուր դեռ մեուր չի հնձած,
 Ուր ապրում եր մարդը, որպէս գերի,—
 Ուր սարիներ բազում մա՛հ եր միայն ցանել
 Կեանքը—սուկեհանդերձ արհանների ձեռնով,—
 Այժմ ելնում է կեա՛նք մի հանճարեղ՝
 Խորհրդային այս բորբ արեգակի ներքոյ:
 Եւ բոլ երգեմ ես այս իմ շառաչուն երգով
 Լեռնացումը այս վեհ, այս չմարող
 Արեգակը՝ վառուած այս երեկոյ՝
 Անեգրական կամփի անմարելու հրով:

Ո՞ր արեգա՛կ, ելած այս երեկոյ՝
 Մեր դաշտերում յառնող ֆալաֆների վրայ,—
 Ո՞ր Արեւմո՛ւսֆ մեռնող, ուր ցերեկով
 Լուսիններ են ելնում—մահաբեր ու մռայլ...
 Ո՞ր Արեւմո՛ւսֆ տալլ, ուր արհաները ծեղ,
 Ուր արհաները կուռ ոստանների,
 Շոալլուրեան, արեան սերմանողներն անեգր,
 Արհաները Ոսկու Տների
 Կախաղան են ելնում ու կործանում իրենց,
 Ինչպէս յեսին դահին, կամ աւազակ,—
 Ո՞ր Արեւմո՛ւսֆ, այսօր ուռնանում են քա մեջ
 Փարսիկներ, հողմե՛ր, ուրազաններ անեղ,—

եւ երգում է եեզ մահը—ահագանգ...
 Ո՛ր, Արեւմտե՛ս տայլ.— զնցոսիներ՛ր,
 Յնցոսիներ՛ր հազած բազմութիւններ մեռնող...
 Ը՛նդ, հոգեվար, բայց բո՛րք բազմութիւններ,
 Որ կերտելու է՛ք վաղը—մեզ պէս—աշխարհ մի նոր...
 Ո՛ր, առաւօ՛ս որ հին Արեւմտե՛սում
 Ուրճանում են մեր բորք արեգակից վառուած,
 Մեր պայքարի, մեր մեծ ընդվզումի հետեով
 Արեւմտե՛սում ծագող, ո՛ր, արեգակն անմար...

.
 Նրանք գալիս են գիւղերից ու քաղաքներից,
 Գալիս են հանքերից,
 Գործարաններից,
 Գալիս են երկրի հեռաւոր ծայրերից,
 Գալիս են բոլո՛ր վայրերից:—
 Ղեկավարի կանչին, սերունդների կոչին
 Գալիս են նրանք միլիոններով,—
 Աշխատանքի այս մե՛ծ գորակոչին
 Գալիս են երկաթեայ
 Շարքերով:—

Անապատ էր այստեղ, անջուր երկիր:
 Մահն էր բռնում այստեղ՝ համասարած:
 Ունկրեղբուն էր այստեղ ֆամիների երգին
 Մի անօգուտ Ջանգու ու մի անբեր Արափ:
 Այս խաների երկրում, այս ցարական
 Մայրամասում, ուր կար միայն ֆամի,
 Ուր սարիներ, դաւեր այս հողերի վրայ
 Շոգն էր միայն չոխում՝ չար յովազի նման
 Լափիլիզելով քե՛ր կեանք, քե՛ր աշխատանք,—
 Այս անապատ երկրում բարձրանում է հիմա
 Աշխատանքի, կամի հերոսական մի կեանք:
 Այս անշրդի, այս շոգ անապատում

Պիսի ելնեն կզուց ձիւնապայծառ վարդեր
 Ու ողկոյզներ պիտի շողան խայտուն.—
 Այս գարունքի համար նանապարհ է հարբել,
 Հարուածային ընկե՛ր, քո եռանդը արդէն,
 Քո գոյամարսն անդուլ...

• • • • •

Ո՛, ջո՛ւր, որ յորդառաս
 Այս քարերի միջով այսօր ելար մարտի.—
 Քո կարկաչում, քո այդ յորձանուտում վարար
 Ես ողջունում եմ շո՛րհը
 Մեր ընդհանո՛ւր մարտի:—
 Ես ո՛չ քե՛ ձայնն եմ քո—քո կարկաչում լսում,
 Այլ որո՛ր երկաթ երակների,
 Հարուածային անթիւ բանակների լեզուն,
 Ոսնածայնը բազում մեր զեղերի...
 Ես լսում եմ դոփիւնը բանակների ըմբոս,
 Որ զեղերով բազում, հազարանուն՝
 Բարձրացի են կոչին դասակարգի մեր նօր,
 Բարձրացի են մարտին մեր ընդհանուր...
 Քո կարկաչում այսօր ես լսում եմ դոփիւնը
 Արեւմուտքում ելնող բանակների,
 Որոնք փորում են հիւնը
 Ու հարթում են հուներ—
 Մեզ հետ մեկտեղ—զայի՛ք գարունների:—
 Քո կարկաչում լսում եմ Ղեկավարի ձայնը,
 Որ բոլորիս մարտի է այսօր մղում:—
 Հարուածային ընկե՛ր,—այդ ա՛յն է, ա՛յն է.—
 Մեր պայքարի որո՛ր՝
 Անպա՛րս ու բազմաբեղուն...

ՔՈՒՍԱՆԵԱՆԻ ԵՐԳԵՐԸ

Քուժանեանի երգերը

Կարդալիս՝ միտս ես

Միտք եմ ածում, քե՛ւ արդեօք

Կարո՞ղ եմ ես էլ՝

Լի՛նել այդքան իմաստուն,

Երբ լինեմ ծեր...

Կարողանա՞մ պիտի ես

Արդեօք, ինչպէս նա,

Այդքան հակզիտս ընդունել

Թե՛ անկում, քե՛ւ՛ մահ.—

Շա՞ղ սալ ձեռքով լիսուտ

Երգեր ու զանձեր,

Իմաստութեամբ անարատ

Երբ լինեմ ծեր...

1934

ՄՈՆՈՒՄԵՆՏ

Ես մտնումնե՛ս կանգնեցի ինձ համար դժուար մի դարում,
Երբ կործանուում էր իմ տուրջը այն ամենը, որ բազմաթիւ
Տարիներ, դարեր էր կանգնել—եւ անմահ էր բռնում աշխարհում:

Իմ մտնումնե՛ս հիւճեցի երգերից ես խոր ու խրթին,
Խոհերից, որ բորբ են ու նոր, որ կեանքն են կրում իրենց մէջ,—
Որ յողելով բոլսեցին իմ դարի բորբոսուն սրտից:—

Մտնեցի ես Ղարսում, սահայն՝ իմ հոգում արեւն Իրանի
Յա՛ր հուրհուրաց, իբրեւ հիւն, հայրենի կարօտ մի անմար,—
Բայց հայրենիքը ոգուս—բովանդակ աշխարհիք եղաւ:—

ԲԵՅՅԵՐ

Ա.

Ո՞վ երգասան, կեանքդ էք երգ ու զինի եր,—
Բանի՞ մարդու կեանք քա դարում—վերքի սրնի եր:—

Բ.

Դու ասացիր՝ հող կը դառնան շահ ու նոխար Համի՛ց,—
Ինչո՞ւ էլ դու կին սրեցիր, ռանգ ու ռուխար, Համի՛ց:—

Գ.

Կեանքի իմաստը զինու մեջ ու ջանի մեջ դու փնտեցիր,—
Բայց, ո՞վ կայեամ, կինն ու զինին փոխանի մեջ դու փնտեցիր:—

Դ.

Ոսկեգոծել է բազում շահերի քա շահիրական ջանքը Ֆիրդուսի՛,
Բայց չեղաւ մի շահ, որ ոսկեգոծեր քա անօգնական կեանքը, Ֆիրդուսի՛:—

Ե.

Շահեշահերի արեալանքների զովասանքը բորբ
Չը ոսկեգոծեց ո՛չ քա մահը խեղն, ո՛չ քա կեանքը որբ:

Զ.

Խօսից եղաւ զառ ու զառբաք, Սայեա՛ք-Նովա,—
Բայց չունեցա՞ր եար ու շարբաք, Սայեա՛ք-Նովա:—

Է.

Ոսկե բառեր, անգին ֆառեր, լալ ու զոհար շարել ես դու.—
Քեզ միայն քա եարն է վառել,—ֆանի՛ եարեր վառել ես դու:—

Ը.

Ո՞ր շահն ունի այդքան ոսկի ու անգին ֆառ, Սայեա՛ք-Նովա,—
Չի՞ ունեցել ինչ պէս շուրջ խալխը՝ նոխար, Սայեա՛ք-Նովա:—

Եւ դո՛ւ, որ մտնելու ես արեւայինց քաղաք՝
 Քաղելու վարդեր ու մանուշակներ—
 Փա՛ռք քեզ, երբ լինես քաղաքի հետքն
 Եւ օրերիդ հանդեպ երկաթեայ փլանցք չհագնես...

Երբ երիտասարդ լինես ո՛չ միայն սրտով քո,
 Ո՛չ միայն մարմնով եւ ոգու անգիտութեամբ,
 Այլեւ իւրաքանչիւր փայլափոխիդ քո հետքով
 Ժամանակը քոյի եւ ողջունե քո երբը՝ խնդրութեամբ:—

Որովհետեւ որքան էլ գարունը հուրհուրայ
 Եւ դափնիներ ցանե հանապարհիդ անցած—
 Պարտաւոր ես, ո՛վ երիտասարդ, դու ինքդ նրան
 Ոսկեգոծել սիրով անագորոյն եւ ընթացքով պայծառ...

Գ

Ուրեմն քոյի՛ր քեքեւափայլ քո դատարար գարնանային
 Եւ քո՛ղ գարունը քոյի քո հետքերով,
 Եւ անվախ դու, ո՛վ երիտասարդ, ապագային նայիր՝
 Վայելելով պտուղը ռոճեական քո առաջին սիրոյ:

Եւ վայելելով պտուղը ռոճեական քո առաջին սիրոյ՝
 Կարո՞ղ ես չզգալ դու, որ հետզհետեւ
 Յանձնուում է քեզ կեանքը—եւ դու
 Պարտաւոր ես քո յարք ուսերից այն գետին չնետել:—

Որովհետեւ կամո՛ւրջ է քո սերը եւ ո՛չ երբեք եզրեք,
 Եւ վարդեր սիրոյդ մարգագետնի խոստումներ են ունայն—
 Երբ սերը հողէ ընկերուհուդ չդառնայ ցոլք սեզ
 Այն վիթխարի ու վսեմ աղամանդի, որ տալիս է մեզ կեանք...

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՂ ԵԿԻՈՐՆԵՐԻ ՀԱՍԱՐ

Դուք գալիս էք աստղերի նման եւ ցորեանցների նման,
Ալիքների նման անեզր ովկիանի,
Գալիս էք նաշակելու ունայնութիւն ու մահ,
Ե՛ւ սրտուրիւն, ե՛ւ վիտս, ե՛ւ ոգու դառնութիւն
աներջանիկ:—

Բայց եւ գալիս էք դուք ընձեռելու այստեղ,
Իբրեւ բախտ անմահական եւ բեղմնաւոր բարիք—
Ա՛յն, որ չունի ցորեանք, եւ չունեն աստղերը—
Սեղծելու հմա՛յրը հոյակապ ի վերուստ մեզ ստուած
այս նանապարհի...
...

Թեեւ գալիս էք դուք ալիքների նման եւ աստղերի՝
Ձեր նանապարհի՛ն, ձեր կոչումի՛ն ձեր ընթացիկն անգեհ—
Բայց լինելու է ձեր երբը այս դժնի ու լուրջ ալիքերին
Արեւներից, աստղերի՛ց աւելի ուրոյն ու բարձրականքեղ...
...

1933—2—26

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆԻ ԱՐՉԱՆԻՆ

(ԵՐԵՒԱՆ, ԱՐՈՎԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ)

Քո պատուանդանը փոքր է չափազանց:—
Բայց մե՞ծ էր արդեօք հեռկը հայրենի,
Որի բարգաւան գալիքին ընծայ
՚Ին հանճարը քո եւ կեանքը բերի:—

1933—5—30

ՏԱՂ ԶՕՆՈՒԱՄ ԽԻԶԱԽ ԶԱՆԱՊԱՐՀՈՐԴԻՆ

Ահաւասիկ հագած ուղեւորի զգեստ,
 Եւ ձեռնիդ ցուպ առած, եւ ուսիդ մախաղ—
 Դու գնում ես դեպի հեռուները վաւել,
 Եւ կորովի ե ոգիդ, եւ դէմքդ հանգիստ ե, եւ
 հայեացքդ՝ կապոյտ ու խաղաղ։—

Թե՛ ի՞նչ մահառումի, կամ ի՞նչ չսեսնուած
 Հեկիաթային ու բարձր մեծագործութեան
 ձանապարհ ես ընտել,—մեզ կը պատմես միայն
 Վերադարձիդ, երբ վերադառնաս եւ ոտքդ չդիպչի
 վարձուքեան։—

Երբ վերադառնաս—հայեացքներում քո լուրք
 Դու կը բերես անհո՛ւն հարիզոցներ,
 Անյայտ հեռուների ովկիաններ կապոյտ,
 Եւ գետերի ընթացք, եւ լեռների տղրայ, եւ
 հողմերի պոյտ՝ բեղմնաւոր ու զօրեղ...

Քո ոտքերի վրայ դու կը բերես հետքեր
 Ռ՛վ գիտե՛, ինչպիսի՛ արահետների,
 Ուր չի կոխել երբեք ուղեւորի ոտքը,
 Ուր բերես դու տեսել ես արեւը՝ գիտերի մեջ՝
 տալլ ու անհասնելի...

Եւ քո լեզուի վրայ, նաւակելիքի,
 Դու կը բերես, Ռ՛վ գիտե՛ ինչպիսի՛ քաղցրութիւններ...
 Ի՞նչ հիւքերով արդեօք դու կը լինես լիքը,
 Եւ որպիսի՛ բոյներ կ'ընդունես...

ՏԱՂ ՀԻՒԱՆԴԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երբ հիւանդ ես դու եւ սկար է ոգիդ,
 Երբ յոգնութիւնն է երգում քո երակներում—
 Այս երգս քեզ չի՛ ամոքի,
 Քանզի ապրողների՛ն է միայն երգը բարիք բերում:—

Բայց դու կարող ես լինել անեզրութեա՛մբ սկար,
 եւ յարութիւնը, որ բարիք է բարձրագոյն եւ ծնունում է ոգու կարօտից—


Կարող է ծանր լինել քո ուսերի համար
 եւ դժբի տեսնողանալ, իբրեւ մեռւո իջնել, եւ աչքերդ զրկել փարսոսից...

Երբ յարութեամբ ես սկար եւ ոգու անեզրութեամբ,
 Երբ հիւանդ ես երգի՛ կարօտով—
 Ես քեզ ապամիճում եւ օգնութիւն կը տամ,
 եւ դու ոտքի՛ կ'ելնես, կ'ողջունես այս երգս քո վիշտը փարսոսող:—

Ապա կ'ընկես ինձ հետ ուղի աղետաւոր,
 եւ քեզ հետ միասին, ո՛վ կարօտի եղբա՛յր,
 Մենք կ'ընթացանք անխտջ դէպի կարօտ մի նոր,
 եւ դժնութիւնը մեր մեզ կը բուայ չնդեալ...

Բեղմնաւոր է այսօր մեր մարգագետինը,
 Մեր հրկիզուած աքօք որբա՛ն արգասաւոր,—
 Ո՛ւմ համար է այսօր, որ հորիզոնը մրին է,
 Ո՛ւմ համար է արեգակը դժբի, ո՛ւմ աստղերն է այսօր զիսաւոր...

Նրանք օրջում են այսօր հիւանդ ու անբուժելի,
 եւ մահառումը նրանց ընդդիմ մահուան—
 Մահառում է արդէ՛ն մահացող, ի վերուստ նիւում ուժերի.—
 Ո՛ր, մահու պարտուած հիւանդների՛, մեր օրերի զբում
 ձեզ համար միայն մահ է գրուած...



Դուք դժուար եք մեռնում. եւ ձեզ համար այն ո՞վ է,
 Ո՞ր գուսանը բռնաւ ու մահափայ,
 Որ ունայն նուագների արիւնով
 Պիտի կեանք սրսիւ ձեր ցամաք երակները եւ ձեր մեռնալ
 սրտերը—յուսոյ հասիկ...

Դուք դժուար եք մեռնում. մահառումով, ահով,
 եւ օրերի այս բունն ովկիանում
 Երբ հնար լինէր—սուգուողների նման չեի՞ք արդեօք
 Մեր ոտերից կախուի, որ մեզ էլ՝ ձեզ հետ միասին՝ ֆաշիֆ անդունդը...

Բայց ձեզ համար ունենք մենք ձեռքերում մեր պիրկ
 Ո՞, դանակ պողպատեայ, եւ ո՞չ երգի հարուած,—
 Ո՞, անսացե՛ք ուրեմն այս կարօտի երգիս,
 Ոգիներ՝ ըմբոս ու կարող, վաղուայ հրով վառուած...

Ձե՞զ եմ ձօնում այս երգս, ո՞վ դուք, որ այսօրուայ
 Մեր խնդութեան, մեր երգի մեր փառքի արշալոյսին,
 Գալիք այգաբացի կարօտի տակ կորուած՝
 Ընթանում եք երգիս հետ միասին,—

Եւ քեկուզ լինում եք դուք երբեմն ծանրաբեռնուած
 Կարօտով, որ նման է հիւանդութեան,—
 Այս տղերով, վսեմ այս դերով կազդուրուած՝
 Դիմեցե՛ք դէպի անյայտ հեռուները—եւ հեռուները ձեզ
 անմահութի՛ւն կը տան...

ՏԱՆ ԶՕՆՈՒԱԾ ԳՐԲԵՐԻՆ

Ո՛ր, գրեերի աշխարհը— զիեզերք է անեզր:

Արեւների նման բազմապիսի,
 Ե՛լ ասպերի նման, ե՛լ շողերի—
 Ես սիրում եմ գրեերը, որ աշխարհի մասին
 Բարբառում են անձուկ ու մտերիմ:

Տարփանքով, ինչպես պատանին,
 Որ սիրում է իր յոյս ընկերուհուն փարուել—
 Ես սիրում եմ գրեերը թե՛ նոր, թե՛ հին,
 Թե՛ արուեստով գրուած, թե՛ անարուեստ:
 Բայց եւ կամով անշեղ, ինչպես դեկալարը,
 Ինչպես այրն է հատուն ձգում սիրած գործին,—
 Ես սիրում եմ գրեերի աշխարհը,
 Իմ խոհերի վսեմ այրուծին:—

Նրանք շա՛հ են ու բազմապիսի, սարբեր ու զուեագեղ,
 Ծնուած զանազան դարերում ու երկրներում,
 Իւրաքանչիւրը բերում է մի առանձին պարզել,
 Իւրաքանչիւրն իր մեջ մի աշխարհ է կրում:—
 Մեր կեանքի երկար հանապարհին
 Հանդիպում են նրանք հեզզհեզ
 Եւ դառնում են ընկեր ու մտերիմ,
 Կամ մնում են անցած սարիների ետերը:
 Ուղեկից են դառնում մինչեւ ի մահ
 Մի քանիսը միայն՝ անդառաճան յաւեհ,
 Եւ այնպիսի՝ գրեեր կան, որ չարքերի նման
 Հալածում են մեզ մինչեւ վերջ,
 Գրեեր կան, որ կեանքում մի ակնթարք միայն

Մեզ ժպտալով՝ անցնում են ու կորչում,
 Բայց նրանցից մնում է մեր սրտերում մի բան,
 Որ տարիներ են մենք անհոգում:
 Գրքեր կան որ խոստում են ու խստադեմ,
 Ինչպես ուսուցիչը, կամ առաջնորդը,—
 Եւ այնպիսի՝ գրքեր եւ գիտեմ,
 Որ համբերի նման անհաղորդ են:
 Աղջիկներու նման սեքեւեր
 Կան կարկաչուն գրքեր, որ հանդիպում են մեզ,
 Հրապուրում, գերում—եւ մտացունում յաւե...
 Օ՛, գրքերի աշխարհը—տիեզերք է անեզր:—
 Նրանք շատ են ու բազմապիսի,
 Իւրաքանչիւրն իր մեջ մի աշխարհ է ուրոյն,
 Եւ պատմում են նրանք մեզ աշխարհի մասին
 Խօսեցողով անկրկնելի եւ անագորոյն:—
 Կան անզգես գրքեր, կան պնդազարդ
 Փոլիանցներ, որոնք սեւամեջ են, ինչպես
 Ասորական արեւայ Բայրասարը,
 Որ պնդում էր իրեն պշուրնու պես:
 Եւ անարուեստ գրքեր կան, որ բնութեան նման
 Խառնիխուռն են բուռում, խառնիճաղանն,
 Բայց գերում են, կապում միմեջ եւ մահ,
 Երբ անխոց ոգով եւ տնտեսամբ ջանաս
 Խորասուզուել, բանալ զաղտնիքները նոցա,
 Նոցա ներքին դաժնութիւնն հասկանալ,—
 Այդ գրքերը խօսի ամրոցներ են զոցած,
 Եւ կը բացուեն քաղաք, երբ լինես անահ:—
 Գրքեր կան որ դրօշակ նման են հոյառեն
 Իդեալների, սակայն ներս եւ մտնում դու երբ—
 Գաղջ՝ շնչում է դեմքիդ ամայութեան փոթին
 Եւ սեղմում է կոկորդի մի մեռեալ ձեռք:
 Անտառների նման գրքեր կան բանձր ու մութ,

Կան ովկիանի՝ նման անհուն գրեք,
 Կան զեփիւռի նման, նման քամա՞ւ,
 Կան, որ գգուում են մեզի, ինչպէս ձեռքեր:—
 Եւ սրինգի ձայնով, եւ շեփորի,
 Եւ որոտի ձայնով կան գրեք,
 Եւ կան անձա՞յն գրեք, որ լռին
 Մտկում են մեր սիրքը եղբրական կրեք...
 Օ՞, գրեքի աւխարհը—սիեզերք է անեզր:—

Ես սիրում եմ նրանց բազմախորհուրդ
 Այս ինքնուրիշը դաւեն, անկրկնելի,
 Նրանց միջեւ եղած տարբերութիւնն այս խոր,—
 Եւ բոլա՛րն են նրանք ինձ սիրելի:
 Արեգակի բոլա՛ր երանգների նման,
 Տիեզերքի նման բազմալեզու—
 Ես սիրում եմ նրանց երփներանգ
 Այս հուրերը կիզուն:
 Եւ բնութեան բոլա՛ր ձայների,
 Եւ մարդկային կեանքի բուրմունքների բոլոր
 Այս ճառագումնն եմ ես սիրում վերին,
 Այս բո՛յլը մտածողով:
 Եւ այս ամենը՝ մեծ մի դաւենութիւն կազմած,
 Կազմած ուրոյն մի կեանք, մի ինքնամտովի աւխարհ—
 Մեր սերնի փայտեայ դարակներում բազմած՝
 Ապրում են լ՛ու կեանքով եւ կենդանի են յար:
 Ես սիրում եմ նրանց լաբիրինթոսը այս լուռ,
 Նրանգների՞, գոյնի՞ շուրջը քիւնն այս մեծ,
 Ինձ սիրելի է միտք բազմազեղումն այս խոր...
 Օ՞, գրեքի աւխարհը—սիեզերք է անեզր:—

Բայց չի մոխրանում յիշատակը... Յիշատակը արդեօք լոյսերի՞ց է,
 Լոյսերի՞ց է արդեօք նա սերում, քե հուրերից անեօք.—
 Յիշատակը սերում է գործերից,— Յիշատակը մեռու է,
 Որ բարձրանում է եկուտոյ ջրերից ջրերից, բայց մնում է ինքը—անմեռ:

Յիշատակը ձեր անցած օրերի արձագանգն է ու ցոյքը, ո՞վ հեռացողներ,
 Նա ծլում է յանախ ձեր անցած հանապարհի փոօս եզրերին,
 Ելնելով ձեր ռոգ կեսօրին՝ նա իջնում է յետոյ, ինչպէս ցօղը,
 Բայց ուրի՞շ վարդերի վրայ, իբրև պարզև վերին...

Ելնելով ձեզանից, ձեր արտից, ձեր խոհերից անդույ,
 Ելնելով արիւնի՞ց անգամ ձեր եւ ձեր շնչից վերջին—
 Յիշատակը ձեզի չի՞ պատկանում, ինչպէս որ տօկերն իմ յանդուզն
 Օ՞, ինձ չեն պատկանում, քե եւ ելնում են անա իմ գրչից...

Այդպէս էլ ռոգն է արեւի եւ ցոյքը մեռած աստղերի.
 Հասնում է լոյսը նրանց մեզ, բայց վաղա՞ց մոխրացած են նրանք:—
 Մոռացութի՛ւն ուրեմն բոլո՞ր մեռեալներին,
 Եւ փա՛ռք նրանց ընդմիջ ու յարիսեան, որ
 բոլել են կեանքում յիշատակի կրակ...

27—11—1933



ԵԾԹԸ ԽՈՐՀՈՒՐԴ ԳԱԼԻՔԻ ՍԵՐՄՆԱՑԱՆՆԵՐԻՆ

Ո՛վ գալիքի սերմնացանցե՛ր, որ լիաբուռ
 Նեսեյու հօ ձեր սերմը մեր ձեռներով հերկած
 Այս դառեցե՛րում, բերրի այս հերկե՛րում՝
 Մեր ֆրսիճով, երգով եւ արիւնով հերկած,—
 Ո՛վ, որ գալու հօ գուարք ու քեթեւաբայլ,
 Արեւի եւ ոգու ծնծղաներով ձեր յուրք,—
 Ահաւաթիկ գրում եմ, որպէս հեռու եղբայր,
 Ձեր ընթացքի համար եօրը խորհուրդ:—

Եւ առաջին խորհուրդս, որ յղում եմ կարմիր
 Մեր օրերից այս բուրք ու գալիքներ.—
 Անդրանիկ բուռը ձեր անեզրական սերմի
 Մեր դառեցե՛րի վրայ իբրեւ ցն՛րօք քափե՛ք:

Փռե՛ք իբրեւ բարիք, որ անհասնում է,
 Մեր երկրի բոշուններին ու հովերին,—
 Թող անսահման լինի նրանց խնդութիւնը,
 Անսահման էր ինչպէս ճառապանքը մեր հին:

Դեպի Հիւսիս յղե՛ք ձեր շնորհը երկրորդ,
 Դեպի սափասաններն ընդարձակ,
 Ուր բոքը կած Կարմիր Ուրազանը մի օր
 Այս հերձեցեալ երկրում եւ ամենուր
 Գարնան անձրե՛ւ զարձաւ:

Իսկ երրորդ բուռը ձեր անհասնելի սերմի
 Դեպի լեռնային Մասիս սերմանեցե՛ք,—
 Թող բանձրացեալ բոչի, իբրև ցնորք ջերմին,
 Դեպի կուրծքը նրա ձիւնածեծ:—

Ապա մի բուռ ցորեան կամ ցնորք,
 Ձեր խոհերի նման լուսափայլ ու ազնիւ
 Սերմանեցե՛ք դեպի այս հին աւանը Նորք,
 Որ այնքեղ նա՛ր երգի մի նա՛ր բոլորոջ հասնի:

Հիմզերորդ բուռը ձեր անհասնելի գանձի
 Սերմանեցե՛ք ոգո՛ւն մեր ի նուէր,
 Որ օրերում հեռու երկնից այս երգն անձիր,
 Այս երազանքը վեհ:

Իսկ վեցերորդ ձեր բուռը, ո՛վ սերմնացաննե՛ր,
 Յղեցե՛ք անցեալի՞ ոսկորներին,—
 Եւ կր լսե՛ք յանկարծ հառաչանքի ձայներ
 Մեր երկրի բոլո՛ր խորքերից:—

Եւ նո՛ր ապա, այս վեց յղումներից յետոյ,
 Լցրե՛ք դուք բուռը ձեր եւ, եօթերորդ անգամ—
 Ձեր ապագայ հունձի անե՛զը կտօսով
 Սերմանեցե՛ք ձեր հերկը անեղբական...

Ուրեմն ո՛վ գալիքի երգասանցե՛ր,
 Որքան էլ վե՛ն լինի ձեր ներկան—
 Չմոռանա՛ք, որ դուք պիտի սերմեր ցանեք,
 Որ լինեն դարից ձեր— երկար:

Եւ իմացե՛ք ուրեմն, որ ո՛չ մի աշխատանք
 Տնաջան չէ այնքան, որքան ոգու հերկը.—
 Ի սկզբանն եր բանը, եւ բանն եր հիգ ու ջանք,
 Եւ ջանքին առընթեր եր— երգը:

Ուրեմն, ո՛վ գալիքի երգասանցե՛ր,
 Ձեր ոգու սեղերով զբախաւորուած՝
 Տնեցե՛ք տնաջան ու հնչիւններ ցանե՛ք՝
 Հերկելով հերկերն անցեալի՝ յանուն գալիք օրուայ:—

Եւ ասում եմ անա— ձե՛զ որ պիտի երգե՛ք՝
 Կարդալով մատեանն այս խորախորհուրդ.—
 Խորհուրդ չի ընդունում ապագայի երգը,—
 Եւ ա՛յս է իմ խորհուրդը եօթերորդ...

ՅԵՆԱՓՈՒՈՒԹԵԱՆ ԿԱՐՄԻՐ ՊՈՆԵՏԸ

Եղիշէ Չարենցի արուեստի խոշոր արժէքը նրա ռէալիզմի և յատկապէս յեղափոխական ռէալիզմի մէջ է: Նրա ռէալիզմը բուրժուական գրականութեան չորութիւնը շունչի եւ ոչ էլ պառնասեանների բանաստեղծութեան ճանրոյգութիւնը: Նրա ռէալիզմը մեծամեծ յողբերի, կրքերի և զգացումների հետ է կապուած, բարձր թռիչք ու բռնկումներ ունի և կեանքից սկզբնաւորուելով՝ հեղեղի պէս գնում է կեանքի վրայից: Թեր այս ռէալիզմով նրա արուեստը յեղափոխութեան հոգեբանութեան հարազատ արտացոլումն է եւ բերեղացնում է ոչ միայն յեղափոխութեան առաւել կամ նուազ հակիրճ վայրկեանները, այլ և լայն ու մեծ թափը: Եւ կարելի է ասել, որ նրա մեծագոյն յաջողութիւնը ոչ այնքան կարճ վայրկեանների արտայայտութեան՝ քնարերգութեան մէջ է, որքան յեղափոխութեան էպօքի զիւցալներգութեան մէջ:

Հին սերնդի մարդիկ, որոնք ապրել և հոգեկան որոշ բովանդակութիւն են ստացել յեղափոխութիւնից առաջ՝ գրեթէ ողբերգական հոգեբանութիւն ունին: Այսպէս, վահան Տէրեանի կարօտի և թախծութեան բանաստեղծութիւնները հետ մտերմացած մարդիկ՝ գեղեցիկ արուեստը միայն նրա մէջ են գտնում, որովհետեւ նրա հետ են կապուած իրենց զգացումները:

Բայց յեղափոխութիւնից յետոյ մեծացած սերունդը նրանց զգացումը չունի և ուրեմն գեղեցիկ արուեստի մասին տարբեր վերաբերում ունի: Եղիշէ Չարենցի նոր շրջանի բանաստեղծութիւնը այս միւս սերնդի արտայայտութիւնն է: Նա չունի վահան Տէրեանի հոգեբանութիւնը, որովհետեւ ընկերային զարգացման տարբեր շրջանի մարդ է, ուրեմն և չի կարող ունենալ նրա բանաստեղծութիւնը:

Թերութիւն է արդեօք Չարենցի համար, որ նա իր նոր շրջանի բանաստեղծութիւններով կարօտի և երազի հոգեբանութիւնը չէ արտայայտում, այլ կամքի և թռիչքի հոգեբանութիւնն է տալիս: Թերութիւն է արդեօք այն, որ նա նուրբ, թախծալի եւ ցաւագին չէ, այլ կորովի է, օգեւորութեամբ լի, մասսաների հետ կապուած է. նրանց պէս խիզախ:

Իթէ վահան Տէրեան ռէակցիայի ծանր տարիներում երազող մտաւորականի բանաստեղծը եղաւ, Եղիշէ Չարենց յեղափոխութեան շունչի տակ գործող զանգուածների կարմիր պոետն է:

(Սընկ)

ՍԻՄԷՈՆ ԾԱԿՈՐԵԱՆ

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FLO318080

ԼՍԱՍԱ ԳՈՅՈՒԹԵԱՆՆԵՐ
ՓՈՒՆԴԱՍԵՆՏԱԼ ԳՐԱԳԱՐԱՆ

ԱՍՊԻՍԻՍԻ

Պր
673

Հրատարակութիւն ՄԱՏԵՆԱՇԱՐ «ՄՇԱԿՈՅԹ»ի

1. — Աւետիք Իսահակեանի հատընտիրը

ԳԻՆ՝ 50 Ս. Դ.



Հասցէ՝

ՄԱՏԵՆԱՇԱՐ «ՄՇԱԿՈՅԹ»

Փոստարկը թիւ 342—Հալեպ

ՅՄԱՌԱՆ ԱՆԻ, Ա. ԲՁՄԲԻՋԵԱՆ

ՍԱԼԻԿԵ ՓՈՂՈՑ, ՇԱԼԵՊ